



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊ. ԳՐԱԴԱՐԱՆ № 6
Զ. ԴԱՆԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

Ա. ՇԽԱՏԱՆՔԸ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՔՆ Ե

ՊՐԱԿ Զ.

Փոխադրությունը ռուսերենից ՅԵ. ԼԱՆԱՅԱՆԻ

Ֆ. ՎԵՐԱՓՈԽՎԱԾ ԳՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 6 ԴԱՐԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ № 6

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

PA
38274

Ա. ՇԽԱՏԱՆՔԸ
ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՔՆ Ե

ՊՐԱԿ Զ.

Փոխադրույուն ռուսերենից ՅԵ. ԼԱԼԱՅԱՆԻ

Բ. ՎԵՐԱՓՈԽՎԱԾ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

№ 563

Գրառեպլար № 223 (բ)

Տիրաժ 4000

Պետերատի սուսլին տպարան Վաղարշապատում

1. ԲՈԼՈՐԸ ՍԵՐՏ ԿԱՊՎԱԾ ԵՆ

Զ սնգը հնչեց. լերեխաներն աղմկալի խմբերով լցվեցին դաստրան: Այնտեղ սեղանի առջև արգեն նստած է ուսուցիչը: Նրա առջև դրված էին յերկու թղթի փաթուլթ: Յերբ աշակերտները բռնեցին իրենց տեղերը, ուսուցիչն ասաց.

— Այսոր յես կամենում եմ ձեզ մի պատմություն պատմել: Այդ, հավանորեն, նույնպես ուշադրավ կլինի, ինչպես և հեքիաթը, միայն ուշադրությամբ լսեցեք:

Ուսուցիչը բացեց փաթուլթները և հանեց հաճարի հացի մի կտոր և գորշ գույնի մի ինչվոր կոշտ: Նա աջ ձեռքում բռնեց հացը, ձախում կոշտը, վեր բարձրացրեց և հարցրեց.

— Ի՞նչ կա իմ ձեռքում:

— Այս հաց է, իսկ այն՝ քար, — պատասխանեցին միջանի աշակերտներ:

— Վհչ, քար չէ, — ասացին մյուսները: — Սա հողի կոշտ է:

— Վհչ քար է և վոչ հող, — ասաց ուսուցիչը, — այլ յերկաթի հանք: Այս տեսակ հանքից հալում են յերկաթ: Այս կոշտ մեր դպրոցն է ընկել

Ուրալից, մեղանից միջանի հազար վերստ հե.
ռավորությունից: Իսկ այն ալյուրը, վորից թխած
ե այս հացը, աղացված ե այն հաճարից, վոր
բուսել ե մեր գյուղի դաշտերում: Ի՞նչ եք կար-
ծում, մեր հացը վորեւ կախումն ունի այն լեր-
կաթի հանքից, վոր հանվում ե հեռու Ուրալում:

Յերեխաները լռում ելին: Նրանց լերեսի վրա
նկատելի յեր տարակուսանք: Վերջապես մի
յերեխա անվստահ ձայնով ասաց.

— Տարորինակ ե... հացը ցանում են մեր
դաշտերում, արոտատեղի յետևում, իսկ հանքը
հանում են հեռու Ուրալում:

Ուսուցիչը դրեց սեղանի վրա հացն ու հանքը
և ասաց.

— Ասել ե, դուք կարծում եք, վոր հացն իր
տեղն ե, հանքն իր տեղը, և յերկուսի մեջ
առնչություն չկա:

Առաջին կարգում նստած եր տասներկու
տարեկան մի խաբարյաշ տղա, Գրիգոր անունով,
յեռանդուն և աշխուժ: Նա բոլոր ժամանակ
մտածում եր, նույնիսկ ճակատը կնճռոտել եր:
Յեվ մի միտք ծագեց նրա գլխում: Նրա աչքերը
փայլեցին, նա վեր թռավ տեղից և վոչ թե
ասաց, այլ բղավեց.

— Յես գիտեմ:

— Ի՞նչ գիտես, — հարցրեց ուսուցիչը.

Գրիգորը վրա բերեց.

— Հողը վարուժւում են արորով, իսկ արորի խոփը
յերկաթից եւ Նաե տափանի ատամները յերկա-
թից են... Հետո մանգաղն ու գերանդին... Իսկ
յերկաթը հանքից ե... Ասել ե, հացն ու հանքը
միմյանց հետ առնչություն ունեն:

— Ապրես, Գրիգոր, — ասաց ուսուցիչը ժպտով
նայելով յերեխայի կարմրած յերեսին. — Նստի՛ր
տեղդ:

— Գրիգորն ուղիղ ասաց, — արտասանեց ուսու-
ցիչը, դիմելով ամբողջ դասարանին. — Մի ժա-
մանակ մարդիկ չգիտեյին, թե յերկաթն ինչ ե,
վարում եյին փայտե գութանով կամ արորով և
բավականանում եյին քարե կացիններով ու դա-
նակներով: Այն ժամանակ ամեն մարդ ինքն
իրեն համար գործիք եր շինում, ուրիշի կարիքը
չեր գտում: Բայց այդ ժամանակներն անցան:
Այժմ առանց յերկաթե գործիքների չի կարելի
տնտեսությունը տանել: Այստեղից հազարավոր
վերստեր մեզ անտեսանելի մարդիկ խփում են
մուրճերով, գետնից յերկաթ հանում, իսկ ձեր
հայրերն ու յեղբայրները վարում են իրենց
աշտերը հենց այդ յերկաթից շինած գործիքնե-
րով: Հողի մշակությունը հաստատապես կապ-
ված ե յերկաթի գործարանների հետ և չի կարող
առանց նրանց գոյություն ունենալ: Բայց և գոր-

ծարանները չեղին կարող գոյութիւն ունենալ, յետեւ վոր յերկրագործներ չլինելին: Նրանք պատրաստուած են հաց, վորով կերակրվում են այդ գործարաններում աշխատողները: Ասել ե, այս կապը փոխադարձ է:

Յերեխաներն ուշադրութեամբ լսում ելին ուսուցչին: Նրանք նույնիսկ մոռացել ելին հետեւ ժամացույցին՝ իմանալու, թե դեռ շատ ե մնացել վոր դասը ավարտեն: Իսկ ուսուցիչը շարունակում եր պատմել:

— Իսկ ինչ կասեք, յերեխաներ, այն մասին, թե վորեւե կապ կա այս կտորների—հանքի և հացի վիճակի մեջ, ինչպես և սրանց և մեր դպրոցի վիճակի մեջ: Յետեւ ուշադրութեամբ նայենք, մեզ կըթվա, իբր վոչ մի կապ չկա. չե՞ վոր դպրոցում վար չեն անում, հաց չեն թխում, և վոչ ել յերկաթ հալում: Այս բոլորը ճիշտ ե: Բայց ասած դու, Գրիգոր, կարող ե դպրոց լինել վոչ նստակյաց մարդկանց մոտ, վորսորդների, թափառականների: Ելինեյին այնտեղ աշակերտներ, յետեւ նույն իսկ մի հրաշքով հիմնվեր նրանց համար դպրոց:— Վոչ:

— Իսկ դու, Պետրոսյան, ինչ ես կարծում, թաթարների արշավանքի ժամանակ կարող եր գոյութիւն ունենալ դպրոցը, յերբ մարդիկ լեռներում, անտառներում թագ ելին կենում, իրենց կյանքն ապահովելու:— Վոչ:

— Իսկ դու, Յերեմյան, ասա, կարող եյին մարդիկ առանց գիտության, առանց դպրոցական և զրական կրթության, հնարել արհեստական պարարտացում, այնպիսին, ինչպիսին հնարեց գերմանացի գիտնական Լիբիխը: Կարող եյին արդյոք, անկիրթ մարդիկ ձեռք վերցնել փայտե գութանից ու տափանից և գործածել յերկաթե արոր ու տափան, կարող եյին կատարելագործել ցանքսի յեղանակները, վորով թե շատ և թե լավ հունձ եյին ստանում:

— Դու, Բագրատունի, մտածիր այ ինչի մասին: Այժմ մեզ մոտ, Հայաստանում, աշակերտները սովորում են քաղաքներում և գյուղերում. ասա՝ կարող եյին այդքան յերեխաներ սովորել: Եթե վոր տպված գրքեր չլինեյին: Յեւ չե՞ վոր գրքերը տպվում են տպարաններում, յերկաթե և պողպատե մամուլներում, տպվում են թղթի վրա, վոր պատրաստվում է նույնպես մեծ, պողպատե մեքենաներով գործարաններում:

— Սրանից հետևում է, յերեխաներ, վոր մեր կյանքում, ինչպես և մեր նախնիքների կյանքում, մինը շղթայվում է մյուսին, մինը կապվում է մյուսի հետ: Այսպես ել առաջին ժողովուրդների կյանքի մեջ կար այդպիսի կապ: Որինա՞կ՝ հնումը մարդիկ չունեյին հաղորդացության ճանապարհներ և յերկաթուղիներ,

խճուղիներ և արագասահ շոգենավեր, մինչև
անգամ միևնույն յերկրի բնակիչները շատ հազիվ
եյին պատահում միմյանց և իրար շատ քիչ
եյին ճանաչում. միայն ծայրահեղ կարիքի ժա-
մանակ մարդը դուրս եր գալիս իր շրջանից:
Բայց յերևացին ճանապարհներ և շոգենավեր
— և մարդիկ շարունակ ճանապարհորդում են
աջ ու ձախ վոչ միայն իրենց յերկրում, այլև
հեռավոր յերկրներում, ծախում են արտասահ-
մանում հաց և զանազան ապրանքներ և իրենց
համար արտասահմանյան ապրանքներ գնում:
Մի վորևե յերկրի տնտեսությունը, բարորու-
թյունը և մասնավորապես պարենը կախված ե
ուրիշ յերկրների տնտեսությունից և բարորու-
թյունից: Մինչև 1914 թվի պատերազմը Ան-
գլիայի բնակիչների համարյա մի հինգերորդը
անվում եր Ռուսաստանի ցորենով, իսկ վերջինս
ստանում եր Անգլիայից զանազան մեքենաներ
և գործիքներ, վորոնք չեյին կարողանում պատ-
րաստել ռուսական գործարաններում: Ճիշտ այն-
պես ել մյուս յերկրների հետ տեղի յեր ունե-
նում մշտական հարաբերությունների և ապ-
րանքների կանոնավոր փոխանակում: Յերբ պա-
տերազմի հետևանքով այս հարաբերություններն
ու ապրանքափոխությունն ընդհատվեցին, այն
ժամանակ քայքայվեց Ռուսաստանի տնտեսու-

թիւներ, արտասահմանումն ել վնասներ կրեցին Ռուսաստանի հետ հաղորդակցութիւնը կտրելուց: Վերականգնել ժողովրդական տնտեսութիւնը, քաջայայտ անաշխատները կարելի չեմիայն այն ժամանակ, յերբ հաջողվենորից վերականգնել կանոնավոր հարաբերութիւն հարեան ժողովուրդների հետ:

— Լավ ըմբռնեցեք, լերեխաներ, ինչ վոր ասոր անցանք: Մարդկանց կյանքում ամեն ինչ կապված է մինը մյուսի հետ: Վորպեսզի հասկանանք այս կապը, հարկավոր է զիտութիւն: Իսկ վորպեսզի կյանքն ընթանա կանոնավոր և հաստատուն, հարկավոր է ընդհանուր աշխատանք, հարկավոր է հասարակական կանոնավոր կազմակերպութիւն:

Այս խոսքերով ուսուցիչը դուրս լեկավ դասարանից:

Ձուռցի լեվ ցաղազուրթաւ համար.— Ի՞նչ առնչութիւն կա յերկրի մշակութիւն և յերկաթի շահագործման մեջ: Ի՞նչ առնչութիւն կա քարածխի շահագործման և կատարելագործված գործիքների և մեքենաների դուրսում տարածվելու մեջ: Վորեւ կապ կա քաղաքակրթութիւն և մարդկանց պարապմունքի մեջ: Ուսումը նպաստում է մարդկանց յերկրագործութիւնը բարելավելուն: Հնումը հնարավոր էր արդյոք ուսում տալ բոլոր տեղերի յերեխաներին ինչո՞ւ:

2. ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՅԵՎ ԱԶԱՏ ԱՇԽԱՏԱՆՔ.

(Ծերունու պատմածը)

— Շատ հին ժամանակ,—սկսեց իր պատմութիւնը ծերունին,—յերբ դեռ լեռ փոքր ելի, մեր նահանգական քաղաքում ապրում էր մի հարուստ, խելառ ազնվական: Նա շատ ճորտեր և հարկադրված (оброчных) արհեստավորներ ունէր քաղաքում: Այդ ազնվականն ամեն տեղ հպարտանում էր իր արհեստավորներով: Մի անգամ մի անգլիացի յեկավ այդ քաղաքը: Մեր ազնվականը հենց վոր պատահեց նրան, չգիտեմ ինչու, մեկեն սկսեց վիճել նրա հետ: Ազնվականն իր արհեստավորներին և ռուս ժողովրդին էր գովում, անգլիացին՝ իր ժողովուրդն էր բարձր դասում. այսպիսով կացինը բարին դիպավ:

— Ինչ համեմատութիւն ձեր և մեր մեջ,—ասում էր ազնվականը.—ձեր ժողովուրդն ազատ է, յերես առած: Յերբ պետք լինի մի բան շինել, պետք է յերկար շոյել վարպետների գլուխը, վոր անեն: Ափսոս չե՞ն մերոնք:

— Իսկ ձերոնք ինչպես են,—հարցրեց անգլիացին:

— Ինչ վոր հրամայես, իսկույն կկատարեն: Դարբինը իմ ճորտն է, ատաղձագործը, դերձա-

կը, կոշկակարը, բոլորն իմ ճորտերն են։ Ինչ վոր ուղեմ—կասեմ մի խոսք—և ամեն ինչ պատ-
րաստ կլինի։

— Միթե, — վրա բերեց անգլիացին։

Վիճեցին-վիճեցին և վերջը գրագ յեկան 10 հազար ուրլով, թե վոր քաղաքում ում վար-
պետներն ավելի շուտ կկատարեն պատվւրը։
Իսկ պատվերի նկարը պետք ե պատրաստե-
ր ազնվականի վարպետների համար անգլիացին,
իսկ անգլիացիների համար՝ ազնվականը։ Ձեռք-
ձեռքի խփեցին ազնվականն ու անգլիացին և դի-
մեցին գործի։

Բայց դու տես, վոր մի խորամանկություն
չանես. դուք խորամանկ ժողովուրդ եք, — նա-
խազգուշացրեց անգլիացուն ազնվականը։

Անգլիացին նստավ սեղանի առաջ, վերցրեց
մի կտոր թուղթ և սկսեց նկարել։ Նկարեց մի
փոքրիկ սալակ, լծասարքը և ասաց ազնվա-
կանին.

— Ահա առ. թող քո գոված վարպետները
պատրաստեն՝ ինչ վոր ախտեղ նկարված ե։

Ազնվականը նայեց նկարին, տեսավ, վոր բո-
լորը շատ պարզ բաներ են, ուրեմն հալթու-
թյունն ապահովված ե, ուստի և ուրախ բացա-
կանչեց.

— Միտկա.

Իսկույն նրա կանչին վազեց մի կազակ տղա։
— Վազիր, Միտկա, — հրամայեց նրան ազնվականը, կառագործ Մակարի, դարբին Իգնատի, թամբագործ Դավթի և ատաղձագործ Գրիգորի մոտ և ընդորին կանչիր։ Տես, անզգամ, չուշանաս, իսկույն վազիր։

Միտկան վազեց, իսկ ազնվականը մի ուրիշ տղայի յեւ կանչեց և պատվիրեց նրան գնալ Միտկայի յետեից և տեսնել, թե արմգ գնաց։ Այսպես եր մեր ժամանակը. մեր տերերը չեյին հավատում, թե մենք նրանց համար ամբողջ հոգով եյինք աշխատում։ Յեւ ճիշտ եւ մտածում եյին։

Միտկան շտապով դուրս վազեց տիրոջ ապարանքից, հասավ փողոցի անկյունը և քալերը փոքրացրեց, սկսեց կամաց գնալ։ Գնում ե տղան հանդարտությամբ ու մտածում, թե առաջ ում մոտ գնա. կառագործ Մակարի, թե դարբին Իգնատի, թե թամբագործ Դավթի։ Մտածեց, մտածեց և վորոշեց առաջ գնալ դարբնի, — նա գետի ափին եր ապրում, այնտեղ, ճանապարհին, կարելի յե և՛ լողանալ, տերը, վոչինչ, կապասե։ Միտկան հազիվ հասավ քաղաքի հրապարակին, տեսավ ճահճի մոտ, մարգագետնում յերեխաները վեգ են խաղում։ Իսկ մյուսները, ավելի փոքրերը, վեր կշտած անդրավարտիկներով, ճահիճն

ին չափում: Փոքրիկ կազակը մոտեցավ նրան և բոլորովին մոռացավ գործը:

— Տո՛ւր մի անգամ ել յես խփեմ,— խնդրեց Միտկան մի լերեխայի:

Բայց նրան չհաջողվեց խփել: Այս միջոցին մոտ վազեց մյուս փոքրիկ կազակ վերահսկիչը և բղավեց.

— Միտկա, տես, կասեմ պարոնին, վազիր շուտով:

Միտկան գլխարկը քաշեց գլուխը և դնաց: Գնում է փողոցով և մտածում է, թե ինչ խաղ խաղաւ: Նա շատ ուրախ է, վոր տիրոջ ապարանքից գոնե մի ժամով դուրս է պրծել և նրա ծեծ ու կանչից կարող է հանգստանալ: Իսկ փողոցում գործեր քիչ չպատահեցին: Քաղաքները, մեր ժամանակ, քնած եյին՝ փողոցներում խոզեր, գոճիներ, հավեր ճեմում եյին, լերեխաներն ել սրանց մոտ չարություն եյին անում: Յեվ Միտկան ել մի այս, մի այն լերեխաներին է միանում: Մի տեղ խոզի մեջքին մի փոքրիկ լերեխա եյին նստացրել, մի ուրիշ տեղում քնած քաղաքապահի հետևից փայտաթելերի (мочальный) պոչ ելին կապել, քթի մեջ կենդանի ճանճ ելին դրել: Այսպես չարաճճիություններ անելով՝ մի ժամից Միտկան հասավ Մակարի տունը և հայտնեց նրա տիրոջ հրամանը:

Հետո Միտկան լողացավ և գնաց թամբագործի մոտ, թամբագործից կառագործի մոտ։ Այսպես անցավ բոլորի մոտ և վերադարձավ զեկուցելու տիրոջը։

— Այդ ինչի՞ այդքան ուշացար, անզգամ, — հարցրեց տերը։

— Յես վազեվազ գնացի ամեն տեղ և տես՝ ինչպես եմ քրտնել, — առանց կարմրելու սուտ խոսեց Միտկան և ցույց տվեց լողանալուց թրջված մազերը։

— Տեսնում ե՞ք՝ ինչպես են մեր մարդիկը, — ասաց ազնվականն անգլիացուն, ցույց տալով Միտկային։

Սպասում ե, սպասում տերը վարպետներին, իսկ նրանք չկան ու չկան։ Նրանք ել չելին շտապում։ Բոլորն ել գիտելին, վոր տիրոջ տալիք աշխատանքներն իրենցից չեն փախչի։ Սպասեց, սպասեց տերը և արդեն կամենում եր մի ուրիշ կազակի ուղարկել, յերբ տեսավ, վոր վարպետները մինը մյուսի յետևից սկսեցին գալ։

Տերը նրանց տվեց նկարը, պատմեց, բացատրեց ամեն ինչ և ասաց․

— Ե՛, ինչ, կկարողանա՞ք շինել։

Կաշխատենք, տեր, — ասացին միաձայն վարպետները։

— Դե գնացե՛ք, աստված ձեզ հետ, — ասաց

տերը: Յեվ հենց վոր նրանք դուրս յելան, տերը
նրանց յետեից վազեց, կարծես թե մի բան մո-
ռացել եր ասելու: Հասավ նրանց նրբանցքի դռան
մոտ և շշնջով ասաց. — Տեսե՞ք, խարդախներ,
շուտ շինե՞ք, թե չե՞ հոգիներդ կհանեմ: Իսկ դու,
Մակարկա, տե՛ս. չխմես, թե չե բոլոր մազերդ
իմ ձեռքով կփետեմ:

Ազնվականը ճանապարհ ձգեց վարպետներին
և սկսեց անհամբեր սպասել, թե յերբ կպատ-
րաստեն: Իսկ վարպետները Միտկայի պես շատ
սառն ձեռնարկեցին գործին: Խանգարիչ միջոց-
ներ ել չպակասեցին. մեկ հարմար յերկաթն եր
պակասում, մեկ փայտը պատրաստ չեր լինում:
Վարպետներն այս ու այն կողմ ընկան, գլխները
պատռեցին, վերջապես յերեք որից հետո շինեցին
վերջացրին, բերին տիրոջ դռանը կանգնեցրին:

Անգլիացին նայեց գործին, գլուխը շարժեց և
ասաց.

— Նկարին փոքր ինչ նման չե, գործն ել մա-
քուր չե կատարված. բայց վոչինչ: Այժմ գնանք
մեր յերկիրը, իմ վարպետների մոտ:

Պատրաստվեց ազնվականը և գնաց ոտար յեր-
կիր: Շատ գնացին, քիչ գնացին, վերջապես հա-
սան մի անգլիական քաղաք, իջան շոգենավից և
գնացին հյուրանոց: Անցնում ե ազնվականն ոտար
քաղաքով, նայում ե շուրջը և արմանում, զար-

մանուկ։ Աղմուկն անգլիական քաղաքի փողոցներում վոչ տեսնված և վոչ լսված ե, ճիշտ մեր տոնավաճ սոնների ժամանակ տիրող ժխորի պես։ Փողոցները սալած են, կարծես թե քարե հատակ լինեն, իսկ սրանց վրա կառքեր, ձիավորներ, հետևականեր շարունակ վազվզում են, կարծես թե բոլորն ել շտապում են մի նոր հրաշք տեսնելու։ Ազնվականը զարմացավ, թե ինչպես ե, վոր վոչ վոք ձիու տակ չի ընկնում, և ասում ե.

Ի՞նչ ուր են շտապում սրանք, բարեկամ։

— Իրենց գործին։ Ամեն մարդ իր գործն ունի, սրա համար ել շտապում ե,— պատասխանեց անգլիացին։

Հագիվ անցել եյին քաղաքի աղմկալի մասը, մի նոր բան տեսավ ազնվականը։ Փողոցներն այլևս այնքան մարդաշատ չեյին, բայց սրանց կողքերին բարձրանում եյին վոչ թե տներ և խանութներ, այլ գործարաններ։ Ծխնելույզներ, ծխնելույզներ, կարծես մոմեր, ցցված են փողոցի յերկու կողմում և ծխում են սև ծխով։ Ծխից մինչև անգամ սև ամպեր են կուտակվել քաղաքի վրա։ Ազնվականը նայեց, նայեց և չհամբերելով հարցրեց.

— Ինչպես ե վոր այստեղ ծխից մարդիկ չեն խեղտվում։ Ախր ու չեն մեր քաղաքները։ Փողոցներում մարգագետիններ են կանաչում, ողը մա-

ըմբռնեց ինքն ինքն և ալսալիս խառնակութիւն չկա...

— Ձեզանում վոչինչ չեն անում, իսկ մեզանում աշխատում են, այս պատճառով ել ծուխ և խառնակութիւն ե տիրում,—պատասխանեց անգլիացին:

Նրանք հասան մի հյուրանոցի և տեղավորվեցին մի սենյակի մեջ, Ազնվականն իր իրերը վալիս բերեց. անգլիացին նրան ասում ե.

— Դեհ, չպետք ե ուշացնել, ինչ պատվեր վոր տալու յես, շուտ արա, տո՛ւր նկարը, ժամանակը թանգ ե:

Ազնվականը նստավ սեղանի առաջ, վերցրեց մի կտոր թուղթ և նկարեց մի կառք՝ բարձր, անճոռնի անիվներով, ուսական մուշտակ, թաղիքի վրանամաններ և գլխարկ՝ ունկապանակով: Անգլիացին նայեց նկարին և անմիջապես սկսեց վազել: Հյուրանոցի բոլոր ծառայողներին գրգռողում ե, վրթվրթում ե, դուրս տալիս իրենց լեզվով, փողը աջ ու ձախ շարտում և բոլորին մի ինչ վոր տեղ ուղարկում: Միքիչ հետո սկսեցին մարդիկ գալ, մինը մյուսի յետևից. գալիս են, խոսում և անմիջապես փախչում: Նայեց, լսեց ազնվականը և սկսեց տեղավորվել ինչպես հարմար ե, իրեն տան պես:

— Յերեք հորս որ այստեղ կապրենք, — մտածեց ազնվականը՝ ջոկելով և տեղավորելով իր իրերը:

Սակայն ազնվականին չհաջողվեց յերկար ապրել ոտար քաղաքում։ Նրանք յեկան առավոտյան, իսկ ճաշից հետո անգլիացին ասում են նրան.

— Դեհ յեկ, ստացիր պատվերդ։

Ազնվականը զարմանքից բացեց բերանը և գնաց անգլիացու յետևից։ Նրանք փողոց յեկան և տեսան, վոր այդտեղ արդեն կանգնած է մինոր կառք, բարձր, անճոռնի անիմներով, իսկ կառքի վրա դրած են թաղիքի վոտնամաններ, մուշտակ և գլխարկ։ Ազնվականի ամբողջ պատվերը լիովին պատրաստ էր։

Հառաչեց ազնվականը, հանեց 10 հազար ռուբլի, տվեց անգլիացուն, իսկ անգլիացին ասաց.

— Ե, ի՞նչ, տեր. ել վիճել չէս ուզի։

— Վո՛չ, բավական է, բավական,—բարկացած ասաց ազնվականը։

— Ի՞նչի՞ յես, տեր, բարկանում, վեճը յես չսկսեցի։ Յես քեզ հենց առաջին անգամ պատահելիս ասացի, վոր ձեր վարպետները մերինների համեմատությամբ վոչինչ չարժեն. ձեր յերկրագործներն ել, թեև ամբողջ որն արյուն քրտինք են թափում, բայց յերկրից այն չեն ստանում, ինչ վոր անգլիացին թեթև աշխատանքով ստանում է։ Յե՛վ ձեր ճորտացած ամբողջ ժողովուրդը...

— Ասա՛ ինձ, բարեկամ,—ընդհատեց նրան ազնվականը,—ի՞նչպես յես իմ ճորտերին և հարկա-

դրված վարպետներին արագաշարժության և արհեստների վարժեցնեմ:

— Թող նրանք դադարեն ճորտ և հարկադրված վարպետներ լինելուց, թող իրենք իրենց վարժեցնեն և կտեսնեք, վոր վարպետը կդառնա հմուտ վարպետ և լերկրագործը տոկուն յերկրագործ:

Հալսնի չե, թե իսկապես վիճել ե անմիտ ազնվականը տարորինակ անգլիացու հետ. կարող ե վիճած լինել, կարող ե և չլինել: Բայց մի անկասկածելի ճշմարտություն ե թագնված ծերունու այս պատմության մեջ: Ճորտությունը լերկուդարից ավելի ծանրանում եր ուսս ժողովրդի վրա. ուսս մարդկանց աշխատանքն ստիպողական, հարկադրական եր, գավազանի տակ: Այս պատճառով ել և՛ արհեստագործությունը, և՛ վաճառականությունը, և՛ լերկրագործությունը, և՛ արվեստները — բոլորը Ռուսաստանում կանգնած ելին: Մեծ գործարաններ չելին հիմնվում, նույն իսկ մեծ քաղաքները խուլ և քնած ելին: Իսկ Անգլիայում, ուր ժողովուրդն արդեն վաղուց թութափել եր ճորտական լուծը, քաղաքներն ազնվալից ելին, մարդաշատ: Յերկրի մեջ ծաղկում եր գործարանային արդյունաբերությունը, և անգլիական ազգն առաջինն եր աշխարհում իր բարորությամբ և նախաձեռնությամբ:

Գիտությունը և ազատութիւնն անմատչելի
եյին ռուս յերկրագործին, և այս պատճառով ել
շատ թուլլ եր զարգացած յերկրագործությունը:
Նա յետ եր մնացել ժողովրդի ամման աստիճա-
նից. ժողովուրդն ավելանալով ավելանում եր, իսկ
յերկրագործությունը, գործիքները, բերքը մնում
եյին առաջվանը: Ռուս յերկրագործի աշխատու-
նակությունը շատ ցածր եր: Ռուս տգետ ճորտ
գլուղացիները չեյին կարողանում հանել յերկրից
այն, ինչ վոր կարող եր տալ գիտակ, աշխատա-
սեր և ազատ յերկրագործը:

XIX դարի կեսերին արդեն շատերին պարզ եր
ռուս ժողովրդի հետամնացութիւնը: Նույնիսկ
շատ կալվածատերեր, այսինքն գլուղացիներ
տերեր, յեկել եյին այն յեզրակացութեան, վոր
հենց իրենց ել ձեռնտու չե ճորտատիրական
իրավունքը, վոր ավելի ձեռնտու յե գլուղացի-
ներին ազատ արձակել և հետո նրանց բանվոր
վերցնել վճարով և այս վճարի փոխարեն պա-
հանջել նրանցից իսկապես փութաջան, լավ և ար-
դյունավետ աշխատանք:

1861 թվին կալվածատիրական ճորտերն ա-
զատվեցին ճորտատիրական կախումից:

Այս բարենորոգմամբ Ռուսաստանը բավական
առաջադիմեց տնտեսապես: Ճիշտ ե, ճորտերի
ազատագրումը լիովին չկատարվեց, ճիշտ ե, սա-

կալահողությունը, անորինությունը, ծանր հարկերը և տգիտությունը թուլլ չտվին նրանց ոգտվելու նոր պայմաններից, — ոգուտ եյին ստանում գլխավորապես վոչ գյուղացիներ, յերկրագործներ: Բայց և այնպես՝ յերկիրը արհեստագործության և վաճառականության համր զարգացումից անցավ արագ զարգացման: Նա ծածկվեց յերկաթուղիների ցանցերով, վորոնցով տարվում ելին հացահատիկներ և վաճառվում արտասանմանում, վորոնցով Դոնեցյան ավազանից քարածուխը փոխադրվում եր ամեն կողմ, վորոնցով հարավից և Ուրալից տարվում եյին չուգուն և յերկաթ և այլ շատ նյութեր: Գետերի վրա զարգացավ նավագնացությունը: Յերկրի մեջ հիմնվեցին և սկսեցին գործել բազմաթիվ գործարաններ: Մրանցից միջանիսում՝ պատրաստվում ելին գյուղատնտեսական գործիքներ, մյուսներում մանած թել և մանուֆակտուրա, յերրորդներում՝ կաշվեղեն և այլն: Միջանի գյուղեր և փոքրիկ քաղաքներ դարձան արհեստագործական մեծ կենտրոններ, յեռուն կյանքով, հազարավոր բանվորներով և հարուստ վաճառականությամբ:

Գյուղերում յերևացին բարեկարգ տնտեսություններ՝ կատարելագործված յերկրագործական գործիքներով, խոտացանությամբ, բազմացան յեղանակով և կենդանաբուծությամբ: Հիմնվեցին

յեղջերավոր տոհմիկ կենդանիների բուծարաններ, զարգացավ վոչխարապահությունը: Մի խոսքով՝ ժողովրդական տնտեսության շատ կողմեր և մասնավորապես յերկրագործությունը մեծ առաջադիմություն գործեցին:

Վոչ. գյուղացիները, գլխավորապես, ոգտվեցին այս բարենորոգման շրջանի, այսինքն 1891 թվի ճորտերի ազատագրումին հաջորդող ժամանակամիջոցի բարիքներից. բայց յեթե այս բարենորոգումը չլիներ, չեր լինի նաև յերկրի մերցույց տված տնտեսական զարգացումը: Այսպես սերտ կապված են բոլորը:

3. ՀՈՂՆ ՈՒ ՄԱՐԴԻԿ Խ.Ս.Հ.Մ. ՄԵՋ.

Դաշտերը. — Խորհրդալին Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը բռնում է հողի ահագին տարածություն: Բնակիչների գլխավոր պարապումնքը յերկրագործությունն է: Սակայն մշակվում է հողի աննշան մասը:

Խ. Ս. Հ. Մ. մեջ ամբողջ հողի 26⁰/₀-ը վարելահող է, 10⁰/₀-ը մարգագետին և արոտատեղի, 39⁰/₀-ը անտառ, 19⁰/₀-ը անպետք հողեր:

Այսպես չե մյուս պետությունների մեջ: Ուրինակ՝ Գերմանիայում մշակվում է ամբողջ հողի կեսը, իսկ Ֆրանսիայում ավելի էս: Ռուսաստանում գրեթե ամեն տեղ տարվում է յե-

ռադաշտյան տնտեսութիւնն, Հարեան յերկրնե-
րում վաղուց արդէն անցել են բազմադաշտյանի:
Իսկ դուք գիտեք, վոր բազմացանի ժամանակ
վարելահողի ամենանշան մասն ե հանգիստ առ-
նում:

Վերցրած հավասար հողամասերից հանգիստ
են առնում—Գերմանիայում հողի $6^0/0$ -ը, Ֆրան-
սիայում՝ $13^0/0$ -ը, Ռուսաստանում $34^0/0$ -ը:

Ի՞նչ են ասում այս թվերը: Նրանք ասում են,
վոր վարելահողի յուրաքանչյուր 100 դեսիա-
տինից Գերմանիայում հանգստանում ե միայն 6
դեսիատին, իսկ Խ. Ս. Հ. Մ. մեջ՝ 34 դեսիա-
տին: Հասկանալի յե, վոր հացահատիկներ ել
Գերմանիայում միաչափ հողամասերից հավա-
քում են ավելի, քան Ռուսաստանում:

Ի՞նչ հացահատիկներ են ցանում ԽՍՀՄ մեջ:
Առաջին տեղը բռնում ե հաճարը, լերկրորդ տե-
ղը՝ ցորենը: Հետո գալիս են վարսակը, գարին
և մյուս հացահատիկները (կորեկ, հնդկացորեն
(гречиха), սխսեռ, սիմինդր, կարտոֆիլ և այլն):

ԽՍՀՄ մեջ ցանած հողի $32^0/0$ -ը հաճար ե,
 $25^0/0$ -ը ցորեն, $10^0/0$ -ը՝ գարի, $19^0/0$ -ը վարսակ
և $14^0/0$ -ը այլ հացահատիկներ:

ԽՍՀՄ յեվ ՀՍԽՀ ընակչութիւնը.—Վոչ միայն
տարածութեամբ, այլ և բնակիչների թվով մեծ
ե ԽՍՀՄ, և յեվրոպական պետութիւնների մեջ

առաջին տեղն է բռնում: XX դարի սկզբում ԽՍՀՄ-ն մեջ մոտ հարյուր յերեսուն միլիոն մարդիկ եյին ապրում, այսիքն յերկու անգամ ավելի, քան Գերմանիայում: Իսկ յերեք հարյուր հիսուն տարի առաջ, XVI դդ դարի վերջին՝ Մասկովյան թագավորության մեջ ընդամենը չորս միլիոն բնակչություն կար: Յերեք ու կես դարում նա ավելացել է քառասուն անգամ: 1550 թ. յեղել է 4 միլ., 1700 թ.՝ 12 միլ., 1800 թ.՝ 35 միլ., 1850 թ.՝ 69 միլ. և 1900 թ.՝ 130 միլիոն:

XVIII դարուց սկսած բնակչության աճումն արագությամբ մեծացել և հասել է գագաթնակետին XIX դարի վերջին: Վերջին 50 տարվա ընթացքում բնակչությունը համարյա թե կըրկնապատկվել է: Սրա գլխավոր պատճառն այն է, վոր նախկին դարերի յերկարատև պատերազմներն ու սրա հետ կապված համաճարալեները տեղի յեն տվել խաղաղ կյանքի, և Ռուսաստանին միացել են շատ յերկրներ իրենց բնակիչներով:

Հայերիս ամբող թիվն այժմ մոտավորապես կարող է հասնել 1,100,000-ի: Խորհրդ. Հայաստանում 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության տվյալներով՝ չըհաշված զորքը, 781,011 բնակիչ կա, վորից 395,538 ար., 385,173 իգական:

Այս թվից 636,288 (324,885 ար., 312,333

իգ.) ապրում եւ գյուղերում, 143,823 (70,683 ար., 73,140 իգ.)՝ քաղաքներում։ Այսինքն ամբողջ ազգաբնակչության 19 տոկոսն ապրում է քաղաքներում, իսկ լեթե վերցնենք ի. Ս. Հ. Մ., այն ժամանակ կտեսնենք, վոր քաղաքային բնակչությունը կազմում է 14%։ Սրա գլխավոր պատճառն այն է, վոր միջանի գավառամասերի կենտրոնական գյուղերը, ինչպես՝ Ղարաքիլիսա, Իջևան, Ստեփանավան, Դիլիշան, խորհրդային իշխանություն տնորինություն մը քաղաք համարվեցին։

4. ԲՐԻԴԻՆՈՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԱ.

Հին, կիսավեր, միհարկանի փայտե տուն, նույնպիսի յերկու խրճիթ, յերեք վոչ մեծ, հին շտեմարաններ, նույնքան ել սարայներ, բոլորովին անպետք ախոռներ և գոմեր (առանց անասունների, վոչխարների և ձիերի), ահա թե ինչ երեսերկայացնում վեց տարի առաջ Պսկովի նահանգի Տորոպեցի գավառի խուլ անկյունում ընկած Բրիդինո գյուղի մոտի կալվածքը։ Միանգամայն աչքաթող արված և ավերված էր այս կալվածքը։ Այս միևնույն դրություն մեջ էր գտնվում նրա շուրջը տարածվող 150 գետիատին վարելահողը։

Այս կալվածքը բավականաչափ փչացել և խառնացել էր դեռ պատերազմից առաջ, և պա-

տերազմի ու հեղափոխութեան տարիները նրան կատարելապես ամալացրին: Պետք եր մեծ աշխատանք և ջանք գործ դնել, վոր կարելի լիներ նրան վերականգնել: Այս պատճառով ել, յերկար ժամանակ մնացել եր ավեր: Յերկար ժամանակ չեր գտնվում մինը, վոր ձեռնարկեր նրա վերականգման ծանր աշխատանքին: Սակայն վերջիվերջո այդպիսիները գտնվեցան: 1918 թվի մալիսի 1-ին կազմակերպվեց Բրիդինոյան կոմունան, վորը տնտեսություն հիմնեց ալդ ավեր տեղում:

Ո՛վքեր եյին ալդ կոմունարները. — տեղական աղքատ գյուղացիները: Գործին սկիզբ դրին Գրամով լերեք ու Պետրով յերկու յեղբայրները:

Նրանք շատ վատ եյին ապրում, ինչպես բրիդինոցիներէց շատերը: Այստեղի հողը անբերրի լեր, ճահճային, առանց աղբով պարարտացնելու բերք չեր ստացվում, իսկ պարարտացնելու համար հարկավոր եր բավականաչափ տավար ունենալ, բայց այդ շատ սակավ եր, մանավանդ պատերազմից հետո: Պատերազմը սաստիկ վատացրել եր առանց այդ ել գյուղական թուլ տնտեսությունը, բայց դրա փոխարեն բերել եր հեղափոխություն, իսկ հեղափոխությունը կյանքի մեջ մտցրեց շատ նոր բաներ, վորոնց մասին առաջ նույնիսկ մտածել չեյին համարձակվում:

Այս նորությունները հասան մինչև խուլ Բրի-
դինոն և պինդ նստան Գրամով և Պետրով յեղ-
բայրների զլխներում: Նրանք խորհրդակցեցին
միասին, գնացին իրենց գավգործկոմի մոտ իմա-
ցան թե ինչ կարելի յե անել և ինչպես, և սկսե-
ցին հավաքել համագյուղացիներին՝ վորպեսզի
կազմակերպեն կոլլեկտիվ (ընդհանուր) տնտե-
սություն, կամ ալլապես՝ կոմունա: Համագյու-
ղացիներն անվստահութամբ վերաբերվեցան դե-
պի այս գործը և միայն միջանիսը յիացան Գրո-
մոֆներին ու Պետրոֆներին: 1918 թվի մայիսի
1-ին Բրիդինոյան համայնական տնտեսությունը
ձևականապես կազմակերպվեց և ստացավ այն
կալվածքը, վոր վերելը հիշեցինք:

Կոմունարները հավաքեցին իրենց բոլոր ու-
նեցած չունեցածը և դիմեցին աշխատանքի:
Ուժասպառ դաշտերում յերեվացին գյուղական
նիհար, թույլ ձիեր, վորոնք արորով ակոսներ
եյին փորում, իսկ ակոսներում ցանում եյին
կիսաքաղց հողագործները: Նրանք նորոգում եյին
կիսավեր շենքերը, վորպեսզի հարմարեցնեն տա-
վարի և մարդկանց բնակության համար: Դժվար
եր բաց գործի նորությունը վողկորում եր ըն-
կերներին և վերջնական հաջողության հույսը հա-
րատեում եր նրանց յեռանդը: Այսպես նրանք
համերաշխ աշխատում եյին, առանց ձեռները

ծախելու, առանց կուշտ ուտելու կամ խորը քնելու: Ընդհանուր աշխատանքով ձեռք բերվածը կազմում եր ընդհանուրի սեպհականություն և գործադրվում բոլոր մասնակիցների և նրանց ընտանիքների կարիքների վրա: Իմ ու քո չկար նրանց մեջ:

Անցան միջանի ամիսներ անխոնջ աշխատանքով և մի անսպասելի չարիք ընկավ համայնական տնտեսության վրա. միակ բնակելի տունը հիմնովին վառվեց: Հրդեհի միջոցին վոչնչացավ գույքի մի մասը: Ցուրտը, քաղցը, նեղությունը ուժգին խփվեցին կոմունարների յերեսին, բայց չկարողացան նրանց ընկճել: Նրանք շարունակեցին կռվել: Այսպես անցան ամբողջ հինգ տարիներ և կալվածատիրոջ ավեր տունը հիմնովին փոխեց իր տեսքը: Կալվածքում կանգնել են յերկու նոր տուն. (28×8 արշին, 24×12 արշ.), վորոնց մեջ ապրում են 40 մարդ, վորոնցից 18 աշխատընդունակ, մյուսները յերեխաներ ու ծերեր: Շինված են տնտեսության միջանի նոր շենքեր — սարայ՝ գործիքների համար, ախոռ և այլն. հիմնված են սղոցարան ու ջրաղաց, վորոնք սկսել են գործել 1923 թ. ոգոստոսի մեկից, վերջանում ե ընթերցարանի և դպրոցի շենքերը, սկսել են չորացնել ճահճային տեղերը:

Մինչև համայնական տնտեսության կազմա-
կերպումը այս կալվածատիրական տնտեսության
մեջ այգեգործություն գոյություն չունեի։ Նոր
տերերը 1921 թվին յերկու դեսիատին տարա-
ծության վրա այգի ձգեցին 270 ծառով (200
խնձորենի, 60 սալորենի և 10 տանձենի)։ Դաշտա-
յին աշխատանքները կատարվում են նոր յեղա-
նակով։ Առաջներն ամբողջ հողաբաժնի վրա ցան-
վում եր ընդամենը յերկու դեսիատին վարսակ,
յերեք դեսիատին առվույտ։ Այժմ կիրառվում ե
բազմադաշտյան յեղանակը։ Ցանքսի ընդհանուր
տարածությունն ե 9 դեսիատին հաճար, 6 դե-
սիատին վարսակ, 4 դեսիատին գարի, 5 դեսիա-
տին սիսեռ, 1 դեսիատին վուշ, 1¹/₂ դես. կար-
տոֆիլ. և 22 դես. առվույտի դաշտեր։ Մնացած
հողը բռնված ե անտառով, արոտատեղիներով և
ճահիճներով։ Յեվ մինչդեռ գյուղական տնտե-
սություններում ստացվում ե դեսիատինին՝ հա-
ճարից 28 փութ, վարսակից՝ 30 — 40 փութ,
գարուց՝ 35—40 փ., կարտոֆիլից՝ 350 փ. այս
համայնական տնտեսության մեջ ստացվում ե
հաճար մինչև 100, փ. վարսակ՝ 70 փ., գարի 110
փ., կարտոֆիլ՝ 800 փ.։ Աշխատանքի սկզբում
համայնական տնտեսությունն ուներ 4 հոգնած
ձի, 4 կով, 10 վոչխար և 3 խոզ, ինչպես և՛
գյուղատնտեսական գործիքներից 2 գութան, 3

արոր, 3 տափան, նաև 2 սալլ, 4 քարշակ, 1 սահնակ և ալլն: Այժմ ունի 6 լավ բեռնակիր ձիեր, 12 կթվող կով, և 26 հորթ: Համայնական տնտեսությունն ունի 2 շոգեմեքենա, 5 կառք, 3 խոտհար, 3 ձիաքարշ փոցխ, 11 գութան, արոր, տափան եռժանի, 2 բազմախոփանի արոր, 6 սալլ, 2 սահնակ և 60 կտոր գլուղատնտեսական իրեր:

Ահա այս ե մի խումբ մարդկանց հնգամյա համառ աշխատանքի արդյունքը, վորոնք միացրել են իրենց ուժերը ընդհանուր գործի համար: Յեվ ամենայն արդարությամբ Բրիդինոյի համայնական տնտեսությունը համարվում է Պըսկովի նահանգի միակ, որինակելի կոմունան:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Նոր-դատ.—Մոսկվայի տպարանների ժողովարանի դահլիճը ժամանակավորապես դարձած էր ժողովրդական դատարանի աշխատանքին վերաբերյալ նիստերի դահլիճ:

Քննվում էր քաղաքացի Պավլովի, կոշկակարանոցի տիրոջ գործը: Պատական սեղանի առջև նստած էր ժողովրդական դատավորը, և նրա կողքերին յերկու ժողովրդական ատենակալներ — գործարանի մի բանվոր և մի բանվորուհի: Մեղադրյալի նստարանի վրա՝ Պավլովը, վկաներն եյին՝ աշխատանքի տեսուչը, կաշեգործական

պրոֆմիության ներկայացուցիչը, Պավլովի արհեստանոցի տասը բանվորները, վորոնցից լերեքը 12—14 տարեկան տղաներ եյին: Ներկա եյին շատ մարդիկ, առավելապես յերկու սեռի բանվորներ:

Կարդում են ամբաստանագիրը, վոր գծում ե մի այսպիսի պատկեր: 1923 թ. դեկտեմբերի 15. «Կաշեգործի շաբթին» Պավլովի կոշկակարանոցը յեկան դիտելու աշխատանքի տեսուչը և կոշկակարական պրոֆմիության ներկայացուցիչը: Պավլովը հենց վոր բակում նկատեց նրանց՝ վաղեց արհեստանոց և ինչ վոր բղավեց. իսկույն բանվորները փախան զանազան կողմեր: Յեվ յերբ տեսուչը միության ներկայացուցչի հետ մտան արհեստանոց, այստեղ գտան միայն լերկու յերեկս, վորոնք թագ եյին կենում ռուսական վառարանի յետեր:

«Յես արհեստանոց չունեմ, հայտնեց Պավլովը և այս յերկու յերեխաներին իրենց ծնողների խնդրով սովորեցնում եմ արհեստ»:

Յեկողները հեռացան առանց վորևե մեղադրանքի: Բայց մարտի 5-ին նորից յերեքացան և այս անգամ հաջողվեց տեսնել արհեստանոցը իր ամբողջ կազմով. — 7 չափահաս բանվորներ և 3 յերեխաներ նստած աշխատում եյին:

«Մենք մեզ համար ենք աշխատում, մի տե-

սակ արտել ե», — հայտնեցին բանվորները տես-
չին, — վոչ մի տեր չունենք:

Տեսուչը չհավատաց այս խոսքերին և սկսեց
քննել. յերևաց, վոր Պավլովը արհեստանոցի իս-
կական տերն եր, և բանվորների բացատրու-
թյունը հետևանք եր նրա պատվերին ու սպառ-
նալիքին: Բռնված Պավլովը հարց ու փորձի մի-
ջոցին սաստիկ բարկանում եր և բղավում տես-
չի վրա. «Դուք միայն խանգարել գիտեք, պետք
ե ձեր վզից բռնել և դուրս շարտել»:

Տեսուչը հասկացավ, վոր Պավլովը մեղավոր
ե, ուստի և սկսեց քննություն կատարել՝ պար-
զելու, թե ինչով եր Պավլովը մեղանչել աշխա-
տանքի վերաբերմամբ յեղած խորհրդային որեն-
քի դեմ: Ընդհանրապես քննություն կատարվում
ե կամ տուժողի գանգատով, կամ այն դեպքում,
յերբ իշխանության ներկայացուցիչը — միլիցիան,
աշխատանքի տեսուչը, սանիտարական վերա-
հրսկիչը և ուրիշներ իրենք նկատում են որենքի
խախտում: Յեթե քննությունը հաստատում ե
որենքի խախտումը, գործը գնում ե ժողդատա-
րան, յեթե վոչ՝ ընդհատվում ե:

Քննության միջոցին Պավլովը շարունակում
եր անորոշ ցուցումներ տալ և հարկադրում եր
իր բանվորներին նույն կերպ վարվել, իսկ
յերբ խաներին նույնիսկ թույլ չտվեց մոտենալ
աշխատանքի տեսչին:

Վերջապես Պավլոսը ներկայացավ ժողդատա-
րանին, մեղադրվելով, վոր խախտել է աշխա-
տանքի վերաբերյալ որոշումը, և արդյունաբերա-
կան ձեռնարկությունների մասին յեղած սանի-
տարական կանոնները, ինչպես նաև վերավորել
է աշխատանքի տեսչին:

Դատի միջոցին Պավլոսը սկզբում աշխատեց
ամեն կերպ արդարացնել իրեն և գործը խճճել:

Դատավորը, վոր չարդեն հասակն առած, ամ-
րակազմ, պարզ հագնված, ըստ յերևույթին,
բանվոր էր, լուրջ, մտախոհ դեմքով և թուփան-
ցող աչքերով, ուշադրությամբ լսում էր Պավ-
լոսի բացատրությունը: Յերբ նա վերջացրեց,
դատավորն սկսեց հարցաքննել վկաներին. ասա-
ցեք, ընկեր, դիմեց նա բանվորներից մեկին,
քանի՞ ժամ էր տևում աշխատանքը Պավլոսի ար-
հեստանոցում և վրձան էր ձեռք վճարում:

«Մենք աշխատում էինք առավոտյան ժամի
7-ից մինչև գիշերվա ժամի 11-ը, — սկսեց պատ-
մել բանվորը, — վարձատրություն ստանում էինք
ամեն մի զույգ կոշիկի համար 70 կոպ. միայն
պարտավոր էինք աշակերտների փոխարեն տի-
րոջ համար շաբաթական յերեք զույգ կոշիկ
պատրաստել: Աշակերտներին նա վոչիչ չէր վճա-
րում, միայն ճաշ էր տալիս և հասարակ հա-
զուստ: Խորհրդային տոներին ստիպում էր մեզ

աշխատել, սպառնալով զրկել մեզ ճաշից և թե-
ւից»:

— Այսպես ուրեմն, դուք որական 14 ժամ
եյիք աշխատում, — ասաց դատավորը, — Դուք բո-
լորդ ել, ընկերներ, այդքան ելիք աշխատում, —
հարցրեց նա մյուս վարպետներին:

— Բոլորս ել, — բացականչեցին բոլորը միա-
սին, — վոչ մեկիս յերես չեմ տալիս:

«Իսկ յերեխաների հետ ինչպես եր վարվում
Պավլովը, — հարցրեց դատավորը բանվորներին»:

— Այնպես եր վարվում, վոր ամենափոքր
հանցանքի համար ծեծում եր: Նա շատ խիստ եր:

Ատենակալ-բանվորուհին, վոր վաղուց զթու-
թյամբ նայում եր նիհար, կեղտոտ, պատառոտ-
ված աշակերտներին, հարցեց սրանցից ամենա-
մեծին. «Ապա պատմիր, թե ինչպես եյիք ապ-
րում վարպետի մոտ»:

— Վատ եյինք ապրում, պատասխանեց նա,
մի վոտը մյուսից հետո բարձրացնելով և վոլո-
րելով ձեռքի մեջ գլխարկը: Նա մեզ ծեծում
եր... սկզբում ինքն եր մեզ ծեծում, հետո ստի-
պում եր աղաներից մեկին կաշե գոտիով խփել
մյուսին. և յերբ խփում եր, վարպետը զիտում
եր, և յեթե կամաց եր խփում՝ հրավայում եր
նորից խփել: Մենք աշխատում եյինք վարպետ-
ների չափ: Աշխատում եյինք վոչ միայն կոշ-

կախարդութիւն վրա, այլ և ջուր ելինք կրում,
փայտ կոտորում, վառարանները վառում:

— Յերբ վարպետը մեզ վաճռւած եր, — ասաց
մյուս տղան, — մեզ պատվիրեց, վոր յերբ տե-
սենք, վոր թղթապանակով մինը գալիս ե, իս-
կույն թագ կենանք: Այդպիսի դեպքի համար
մենք միչև անգամ նշանի դանդ ունեյինք: Յերբ
այդ դանդը հնչում եր՝ մենք ծակերն ելինք
մտնում:

— Բայց չե՞ վոր ձեզ համար ավելի լավ կլի-
ներ, — ասաց դատաւորը, — վոր աշխատանքի տե-
սուչը քննութիւն կատարեր և ձեզ պաշտպա-
ներ:

— Վարպետը պահանջում եր, և մենք նրա-
նից վախենալով, անում եյինք, ինչ վոր հրա-
մայում եր, — պատասխանեցին տղաները:

Վիտների հետագա ցուցումներից յերևաց, վոր
արհեստանոցը, 9 քառակուսի սաժեն մեծու-
թյան սենյակը, տարին միայն յերկու անգամ
եր լվացվում: Միշտ կեղտոտ եր, միշտ լի աղբի
կույտերով: Յեւ այսպիսի մի տեղում ամբողջ որը
աշխատում եյին վարպետներն ու աշակերտները,
այնտեղ ել ճաշում եյին, և գիշերում:

Մեղադրյալը մույլ դեմքով լսում եր վար-
պետների և տղաների պատմածները. նրան այլ
ևս դժվար եր ծածկել, ուրանալ. և նա հանձն

առավ մեղադրանքը: Միայն տղաների ծեծելու մասին տված հարցին նա հարկավոր համարեց այսպիսի բացատրութիւն տալ:

«Յես ինքս շատ քիչ անգամ եյի ծեծում տղաներին, ասաց Պավլովը: Մեծ մասամբ յես հրամայում եյի մեկին՝ թակել մյուսին»:

Կարճատե խորհրդակցութիւնից հետո դատավորը կարգաց դատավճիռը. Պավլովին դատապարտել մի տարվա բանտարկութեան:

Աշխատանքի որոնսզիրքը. — Կոշկակարանոցի տեր Պավլովը մի տարվա բանտարկութեան դատապարտվեց աշխատանքի որոնքը և արդյունաբերական ձեռնարկութիւնների սանիտարական կանոնները խախտելու պատճառով: Այդ ինչ որոնքներ են:

Մինչև հեղափոխութիւնը մեզանում պատահում էր, վոր գործարաններում և արհեստանոցներում բանվորական որը տևում էր 10, յերբեմն՝ 12 և ավելի ժամ: Որոնքը շատ թույլ էր պահպանում բանվորական դասակարգի շահերը: Աշխատավարձը, ինչպէս նաև առողջապահական պայմանները (աշխատավայրերի մաքրութիւնը, ընդարձակութիւնը և հարմարութիւնները), այս բոլորը կախված էյին տիրոջ բարի կամքից:

Որոնքը շատ քիչ էր պաշտպանում բանվորի շահերը:

Բոլորովին այլ կերպ դարձավ հեղափոխու-
թյունից հետո: Խորհրդային իշխանության հրա-
տարակած առաջին որենքներից մինը յեղավ
1917 թ. հոկտեմբերի 29-ի բանվորական 8-ժամ-
յա որվա վերաբերյալ որենքը: Հետագայում այս
որենքը ընդարձակվեց այս կամ այն մասերում,
փոփոխվեց և վերջապես ստացավ վերջնական
մի ձև աշխատանքի որենսզիրք խորագրով, վոր
հաստատվեց 1922 թվին: Միաժամանակ կազ-
մակերպվեց առանձին Աշխատանքի Ժողովրդա-
կան Կոմիսարիատ: Որենքի հիմնական պահանջն
է. բանվորական որը չի կարող 8 ժամից ավելի
տևել որվա ընթացքում: Գիշերային աշխատանք-
ները ավելի ծանր են քան ցերեկվանը ուստի և
գիշերային աշխատանքները տևելու յեն միայն
7 ժամ: Հետո անչափահասների (16—18 տարե-
կան) ստորյերկրյա բանվորների (ինչպես որի-
նակ ածխահանքերում աշխատողները) և մտա-
վորապես աշխատող մարդկանց համար հաստատ-
ված է 6. ժամյա բանվորական որ: Մինչև 16
տարեկան հասակը աշխատանքը ամբողջովին
արգելված է: Առանձնապես կարճատև բանվո-
րական որ սահմանված է քաջայիչ արդյունա-
բերության համար (7, 6, 4 և նույնիսկ 2 ժամ),
միանգամայն պարտավորացնելով, վոր այսպիսի
աշխատանքների ժամանակ բանվորներին արվի

կաթ, կարագ, հատուկ հագուստ, դիմակ: ար-
տադիր ե ճաշի ժամանակ ընդմիջում անել, ար-
տաժամյա աշխատանքները թույլ են տրվում
միայն բացառիկ դեպքերում (հրդեհ, հեղեղ, մե-
քենայի փչացումն, վոր անհրաժեշտ ե անմիջա-
պես վերանորոգել, վորպեսզի աշխատանքը յեր-
կար չդադարի): Այսպիսի բոլոր դեպքերում ար-
տաժամյա աշխատանք թույլ ե տրվում յուրա-
քանչյուր բանվորի համար տարեկան վոչավելի 120
ժամից և այն ել միայն աշխատանքի տեսչի
թույլատվությամբ: Ամեն մի բանվոր, վոր ծա-
ռայել ե $5\frac{1}{2}$ ամիս պետք ե արձակուրդ ստա-
նա տարեկան առնվազն յերկու շաբաթ: Անչա-
փահաաները, վորոնք աշխատում են քայքայիչ
ձեռնարկությունների մեջ, ստանում են յերկու
շաբաթվա լրացուցիչ արձակուրդ: Ձեռնարկու-
թյուններում աշխատանքը շատ անգամ վատ
ազդեցություն ե թողնում բանվորների առող-
ջապահության վրա այն պատճառով, վոր աշ-
խատատեղին (արհեստանոցը) վատ ե շինված, կեղ-
տոտ ե պահվում և այլն: Աշխատանքի որհնա-
գիրըը խիստ պատասխանատվությամբ պահան-
ջում ե, վոր ամեն միջոց գործ դրվեն աշխա-
տատեղի անհարմարությունները վերացնելու.
պահանջում ե նրանց կարգին պահել (առողջա-
պահիկ դրությունը):

Աշխատանքի որենսզրքի գործադրության հրահողությունը դրված է աշխատանքի տեսչի վրա, վորոնք բանվորական կազմակերպություններից ընտրված ներկայացուցիչներ են: Դրանց ոչնուժ են բժիշկները և ինժինեըները (առողջապահական և տեխնիկական տնտուչներ):

Վերջապես աշխատավարձի վերաբերությամբ որենսզիբքը սահմանոււմ է մինիմոււմ չափը: Այս մինիմոււմից ցած վարձողը իրավունք չունի վճարել բանվորին: Բանվորին առանց լուրջ պատճառի չի կարելի հեռացնել:

Այդ պատճառները ճիշտ վորոշված են որենսզրքոււմ:

Ահա դրանք են գլխավոր առմամբ բովանդակությունը աշխատանքի որենսզրքի, վոր պաշտպանոււմ է բանվոր մարդու աշխատանքը Խորհրդային հանրապետության մեջ, և հենց այս որենքների խախտման համար եր, վոր կոշկակարանոցի տեր Պավլովը բանտ նետվից:

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ.

Ծովածոցն ահագին, կլոր հայելու պես փայլոււմ եր ամառային պայծառ արևի տակ: Նրան աջ և ձախ կողմերից անջրպետոււմ ելին բաց ծովից կիսաշրջանով յերկու հրվանդաններ, մինը բավական բարձր, մյուսը հարթ: Այս յերկու

հրվանդանների միջից ազատ յերևում եր անսահման ծովը, վոր հեռվում միանում եր հորիզոնի հետ: Ծոցի ափին և հեռու խորքում ցրված եյին տներ, մեծ մասամբ մի հարկանի. նրանց սպիտակ պատերը պարզ վորոշվում եյին ծառերի կանաչների միջից, իսկ ավելի հեռուն, խորքում, ցցվում եյին բավական բարձր լեռների ալիքավոր կատարները, վորոնք հյուսիսային կողմից բաժանում եյին նեղ ծովափը:

Այնտեղ, ուր վերջանում են տափաստանները և սկսվում լեռները, տարածվում ե մի թփուտ, լի դժնիկներով (держи дерево). Վորջան լեռը բարձրանում ե՝ այնքան թփուտը փոխվում ե մանր կաղնու անտառի, խառն հաճաղենիներով: Անտառը ծածկում ե լեռների լանջերը մերթ կիսով չափ, մերթ ավելի ևս դատարկ թողնելով նրանց կատարները: Ամպամած որերին (ամառը շատ հազիվ են պատահում) ամպերը խիտ պատում են լեռնաշղթան և շատ անգամ իջնում մինչև անտառի սահմանը: Դաշտի մարդկանց համար լեռների լանջերի վրայի արեղ ամպերի տեսքը մի առաձին հետաքրքրական տեսարան ե կազմում: Աշնանը և ձմռանը ծովածոցին փռված փոքրիկ քաղաքը հանդիստ ե և սակավամարդ, մինչդեռ ամառվա սկզբից մինչև աշնան կեսը այդտեղ կյանքը յեռ ե գալիս: Բանը նրանումն

ե, վոր այս քաղաքը կուրորո ե և այստեղ դա-
լիս են հանրապետությունների Միութեան բոլոր
կողմերից մարդիկ՝ հանգստանալու և առողջա-
նալու: Հարաժային տաք արևը և ծովային լո-
ղարանները դեղերից ել լավ են վերականգնում
մարդու ուժերը:

Առավոտյան ժամի 9-ն ե, արեգակն արդեն
կիզում ե, սակայն նրա տաքությունը մեղմա-
նում ե ծովի կողմից փչող թեթև, թարմ քա-
մուց: Մովսիսյա փողոցի տներից մինի ցանկա-
պատի միջից յերևում ե մի այլ տան առջև տա-
րածված կրոկետի ավազապատ հրապարակը և
մարմնամարզական վարժությունների զանազան
պարագաներ՝ բարձր սյուն, ուանդուխտ և այլն:

Միքանի մարդիկ տարված խաղում են կրո-
կետ: Մինը անհաջողակ փորձում եր բարձրանալ
սյան վրա, բայց ամեն անգամ մի քիչ բարձրա-
նալուց հետո սահում եր ներքև, միքանի մար-
դիկ ել նստած են ծառերի տակ դրված նստա-
րանների վրա. սրանցից միքանիսը կարդում են,
մյուսները դիտում կրոկետ խաղը:

Սլան վրա բարձրացողը վերջապես թողեց իր
փորձերը և սրբելով ճակատի քրտինքը մոտե-
ցավ կրոկետ խաղացողներին և ասաց. թողնենք,
ընկերներ, այդ խաղը, գնանք լողանալու:

— Միքիչ սպասիր, իսկույն կվերջացնենք,— պա-

տասխանեց խաղացողներին մինը, — գնա կանչիր, մյուս ընկերներին:

Շուտով խաղը վերջացավ և մոտակա դռնակից, վորի վրա կախված էր մի ցուցանակ հետևյալ վերնագրով. «Հանգստյան տուն № 1» փողոց դուրս լեկան 20-ի չափ մարդիկ՝ զանազան հասակի: Այստեղ կային լերիտասարդներ, 18—20 տարեկան, կային և հասակավորներ՝ հիսունից անց. դժանցից միջանիսը մինչև գոտին մերկ էյին, մյուսների ոձիքը լայն բացված էր և թևերը մինչև արմուկները սոթկած: Բոլորն արևից վառված էյին. յերևում էր, վոր դրանք վաղուց էյին վառվում արևից: Խումբը ուղևորվեց դեպի ծովը:

— Չմանե՞նք մեր հարևանուհիներին մոտ № 2 հանգստյան տունը, — առաջարկեց մինը: — Չըրավիրենք մեզ հետ գնալու:

— Դնանք — ասացին միջանիսը, — յեթե միայն նրանք մեզանից առաջ չեն գնացել:

Հանգստյան լերկրորդ տնից այս խմբին միացան 20-ի չափ կանայք և բոլորը միասին գնացին դեպի ծով՝ ուրախ զրուցելով: Կատակն ու ծիծաղը վոչ մի բռպե չէյին ընդհատվում: Կանայք ընտրեցին իրենց համար մի գեղեցիկ տեղ, բաժանվեցան խմբից և գնացին լողանալու: Տղամարդիկ անցան առաջ և նույնպես գտան

լողանալու հարմար տեղ։ Լողանում ելին, դուրս գալիս ափը, մերկ պառկում արևի տակ և նորից մտնում ջրի մեջ։

Այսպես անցավ յեր'լու ժամ։ Լողանալուց հետո յերկու խմբերը նորից միացան։

«Հիմա ուր գնանք, տո՛ն»։

— Ինչո՞ւ տուն, ավելի լավ է գնանք զբոսավայրը և այնտեղ մնանք մինչև ճաշ։

«Լավ, ուղևորվենք, ընկերներ, դեպի զբոսավայրը»։

Զբոսավայրում արդեն գտնվում էին մի լեռերեք տասնյակ կին և տղամարդ մյուս հանգըստյան տներից։ Նրանք փոքրիկ խմբերով նստած էին, կամ ծովափի խոտերի վրա պառկած։ Մի քանիսը ծխում էին, իսկ մյուսները գիրք կամ լրագիր կարդում, յերրորդները խոսում ելին։

— Վճրքան լավ է այստեղ, ընկերներ, — լավեց մի խմբում, — ախպես չե՞ ինչպես Որեխովո-Ջուլեվում։

— Ե՛հ, ինչի հետ համեմատեց, Որեխովո-Ջուլեվի. գոնե, համեմատելիք Սերպուխովի հետ՝ ելի քիչ-միչ նման կլինեիր, ասանց մի կատակասեր։ Բոլորը ծիծաղեցին։

— Վոչ միայն լավ է, — ասաց մի հասակավոր մարդ, այլ և ահագին ոգուտ է ստանում բանվորը՝ ապրելով այստեղ յերկու յերեք շաբաթ։

որինակի համար, վերցրե՞ք հենց ինձ, անցյալ տա-
րի լես ծայր աստիճան թուլացա գործարանում.
վոչ մի հիվանդութուն չունեյի, բայց և ուժ
չունեյի, հազիվ հազ կարողանում եյի մի կերպ
քաշ գալ: Ինձ թվում եր, թե շուտով անկար-
ների շարքը կդասվեմ, կամ մյուս աշխարհը կեր-
թամ, բայց բարեբախտաբար մեր գործարանի
աշխատանքի պահպանության հանձնաժողովի ան-
դամներից մինը ինձ փրկեց: Տեսնելով ինձ, ասաց.
«Շատ ես թուլացել, Բարսեղ, գիտես ինչ կա-
նես, փոխանակ արձակուրդտ Որեխովում անց-
կացնելու, զնա հարավ, հանգստյան տուն, ախ-
տեղ կվերակենդանանաս»: Ճիշտն ասաց, յես
սկզբում կասկածում եյի, թե դրանից բան դուրս
կգա, սակայն նա ինձ համոզեց և յես մի ամ-
բողջ ամիս այստեղ ապրեցի և ճիշտ վոր բոլո-
րովին վերակենդանացած վերադարձա տուն:

Այս տարի հանձնաժողովը նորից վորոշեց յեր-
կու շաբաթով ինձ ուղարկել այստեղ վերջնա-
կանապես կազդուրվելու. շուտով կլրանա իմ
արձակուրդը և յես միանգամայն առողջ եմ
զգում ինձ: Այսպես ել կլինեն մյն բոլոր ընկեր-
ները, վորոնք գալիս են ալետեղ:

— Դա միանգամայն ճիշտ ե, — հաստատեցին
Բարսեղին լսողները, — յեթե տանը մնայինք, ար-
ձակուրդն ել զուր պիտի անցներ. ինչ-վոր ճիշտ
ե, ճիշտ ե:

Միուս խմբումնեւ նոր յնպես հանգստւան տան
մասին ելին խոսուով։

— Ինձ միայն հինգ որ ե մնացել ալստեղ
անցկացնելու,— տխուր ձայնով ասաց մի դեռատի
աղջիկ։— Նորից համեցեք ճախարակի մոտ։

— Դե հա, ազահուլթյուն մի անիր,— ասաց
մոտը նստած հասակավոր կինը,— լավ հանգստա-
ցելես, կարողես և աշխատել։ Միայն յես ու դու
չենք գործարանում, պետք ե մյուսներին ել հերթ
տանք հանգստանալու։ Դու ինքդ լավ գիտես, վոր
մեկնման շատերը կան, մեր արձակուրդը կլրանա,
հանձնաժողովը մեր տեղ ուրիշներին կուղարկի։
Այսպես հարյուրավորներ կգան կհանգստանան։

Աղջիկը վռչինչ չպատասխանեց, միայն հառաչեց։

Այս ժամանակ լսվեց զանգակի բարձր և տե-
վական ձայնը։

Ձանգահարում են ճաշելու։ Վեր կենանք, գնանք,
ընկերներ։

Բանվորներն ու բանվորուհիները խոսակցու-
թյունը շարունակելով թողին զըստավայրը և գնա-
ցին դեպի իրենց հանգստւան տները։

Աշխատավորի առողջության պահպանությունը։—
Աշխատանքի վերաբերյալ խորհրդային որենս-
գիրքն աշխատավորների միայն աշխատելու ժա-
մանակի մասին չի խոսում։ Ամեն մի գործարա-
նում կազմված ե աշխատանքի պաշտպանության

աւանձին հանձնաժողով, վորը զբաղվում է աշխատանքի պայմանների, աշխատանքի պաշտպանության, բանվորների առողջության և կենցաղի բարելավման խնդիրներով: Հանձնաժողովի գլխավոր խնդիրներն են՝ նախ՝ հսկել, վոր բանվորական ուրը 8 ժամից ավելի չտևի, 2. հոգալ արհեստանոցների առողջապահիկ դրության մասին (աշխատատեղիի մաքրությունը, բավարար ընդարձակությունը և այլն), 3. աշակցել աշխատանքի տեսուչներին, 4. հասցնել բժշկական ոգնություն, 5. ուղարկել հիվանդներին սանատորյաներ և հանգստյան տներ, 6. ապահովագրել աշխատավորներին:

Առաջին յերեք խնդիրները բացատրության կարող են, պետք է միայն մանրամասն խոսել բժշկական ոգնության և հասարակական ապահովագրման մասին: Նախ միջանի խոսք ասենք միջոցների մասին:

Ըստ որենքի, ամեն մի արդյունաբերական ձեռնարկություն վճարելով բանվորներին աշխատավարձ՝ պարտավոր է մտցնել պետական գանձարան աշխատավարձի 15—20 տոկոսը:

Այս մոլծանքից կազմվում են կապիտալներ, վարոնք ծախսվում են բանվորներին բժշկական ոգնություն ցույց տալու և նրանց ապահովագրելու: Յերբ բանվորը վորևե ծանր հիվանդությամբ

բռնվում է, հանձնաժողովը միջոցներ է ձեռք
առնում մի համապատասխան բժշկական հիմնար-
կության մեջ տեղավորելու նրան: Բացի ծանր հի-
վանդանալուց, բանվորներն աշխատանքից ուղղա-
կի թուլանում են, սաստիկ հոգնում և չեն կա-
րողանում այլևս աշխատել: Հանձնաժողովը ընտ-
րում է նրանցից ամենից ավելի հոգնածներին,
ամենաթուլերին և ուղարկում նրանց հանգըս-
տյան տուն զլխավորապես ամառը: Այսպիսի աներ
բացված են Խորհրդային միության շատ վայր-
երում, մանավանդ Ղրիմում և Կովկասում:

Բացի դրանցից, յերբ բանվորը մի վորև գլժ-
բախդ դեպքով կորցրել է իր աշխատունակու-
թյունը, դարձել է անկար (инвалид) նրան արվում
է թոշակ իր մշտական աշխատավարձի չափ: Այս
նպատակով կազմակերպված են ապահովագրա-
կան գանձարկղներ:

Յեթե վորև գլժբախտ դեպքով մեռնում է
բանվորը՝ նրա ընտանիքն է ստանում թոշակ:
Իսկ յերբ բանվորը կամ նրա ընտանիքի վորև
անդամը մեռնում են՝ ապահովագրական գան-
ձարկղը տալիս է նսպաստ թաղման ծախսերը հո-
գալու:

Բանվորը իր հիվանդության ամբողջ ընթաց-
քում ստանում է ապահովագրական գանձարկղից
նսպաստ իր մշտական աշխատավարձի չափ: Բժշկա-

կան ոգնությունն և դեղերը ձրիաբար են ստանում, ինչպես հիվանդացած բանվորը, նույնպես և նրա ընտանիքի անդամները: Հղի կնոջը, վորն որենցով չորս ամիս արձակուրդ է ստանում, գանձարկոն ամեն ամիս վճարում է ամբողջ աշխատավարձը:

Յերեխան ծնվելիս բանվորուհին կամ բանվորի կինը դրամական նպաստ է ստանում ապահովագրական դրամարկդից՝ յերեխային խնամելու համար: Բացի դրանից ծծկեր յերեխա ունեցող բանվորուհին կամ բանվորի կինը սննդյան նպաստ է ստանում: Թ ամիս շարունակ, Վերջապես, յեթե բանվորը զրկվում է աշխատանքից և գործազուրկ դառնում, ապահովագրական գանձարկը հրահանգների հիման վրա նպաստ է տալիս:

Ահա սրանք են բժշկական ոգնությունն ու հասարակական ապահովագրությունը, վորոնցով ոգտվում է բանվորը աշխատանքի վերաբերմամբ յեղած որենցների հիմունքով:

Այս որենցների գործադրության վրա հոգում է աշխատանքի պահպանության գործարանային հանձնաժողովը. հենց նա չել պարտավոր է հսկել, վոր արդյունաբերական ձեռնարկությունները ժամանակին և լրիվ վճարեն իրենցից պահանջված տուրքը հասարակական ապահովագրության համար:

7. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԸ.

1. Դուք կարդացիք, վոր այժմ բանվորները հավաքվում են արտադրական — տեխնիքական խորհրդակցությունների, քննում են իրենց ձեռնարկությունների հաջողությունն ու անհաջողությունները, բացարձակ ցույց են տալիս կառավարության նրա պակասությունները, և արտահայտում են իրենց ցանկությունները գործարանը կամ ձեռնարկություններն ավելի լավ հիմքերի վրա դնելու: Հավաքվում են գործաբանային բանվորներն արտադրական ընդհանուր խորհրդակցության. հավաքվում են նույնպես ըստ համաժարության և ըստ բջիջի: Յեվ այս խորհրդակցություններն առանց ազդեցության չեն մնում ձեռնարկության ամբողջ ընթացքի վրա:

Աչքի ընկնող և վերձված բանվորները մասնակցում են գործարանի և ձեռնարկության վարչական կազմի մեջ. ընտրվում են կարմիր վարիչներ կամ նրանց տեղակալներ: Մի քանի բանվորներ մտնում են արդյունաբերական տրեստի — այսինքն միատեսակ ձեռնարկությունների միության վարչության մեջ, ասել ե՛լ մասնակ-

ցում են մի ամբողջ շարք ձեռնարկությունների, լերբեմն մի ամբողջ տասնյակ գործարանների կամ ձեռնարկությունների կազմակերպության և կառավարության:

Նաև տեսնում ենք, վոր բանվորի դրությունը առաջվա նման պատահմունքի և տիրոջ քմահաճույքներին չե թողնված: Բանվորի աշխատանքը այժմ չի կարող վորոշ սահմանածից ավելի տևել: Բանվորական որվա տևողությունն ընդհանուր կանոնների համեմատ 8 ժամից ավելի չպիտի լինի և ով ստիպե բանվորին որվա ընթացքում 8 ժամից ավելի աշխատել, դատի կենթարկվի: Այժմյան ժողովրդական դատարանը, առաջնորդվելով աշխատանքի մասին յեղած որենքներով, խստիվ պատժում ե բանվորների շահերի դեմ գնացողներին. իրենք դատավորները և սրանց առնթերակաները աշխատավոր դասից են և սրանց համար պրոլետարիատի շահերը հասկանալի և թանգ են:

Բանվորների շահերի պաշտպան հանդիսանում են պրոֆսիոնությունը և գործարանային տեղկոմները, վորոնք գոյութուն ունեն ամեն մի գործարանում և ձեռնարկություններում: Նրանք ձգտում են բարելավել բանվորների դրությունը, բարձրացնել նրանց աշխատավարձը, վարձատրել յուրաքանչյուրին ըստ յուր աշխատանքի, սա-

կայն վոչ ի վնաս արդյունաբերության և ձեռնարկության:

Նրանք աշխատում են բարելավել բանվորներին բնակարանային պայմանները, կազմակերպում են նրաց համար զարգացուցիչ միջոցներ, հիմնելով ժողովարաններ, դասընթացներ, եջուկուրսիաներ, մի խոսքով այն ամենը՝ ինչ նպաստում է բանվորների նյութական և հոգեկան կյանքի բարձրացմանը: Բանվորներին, նրանց կանանց և լերեխաների կյանքը, կենցաղն ու առողջությունը կազմում են պրոֆմիությունների նպատակը:

Բոլոր մեծ գործարաններն ու ձեռնարկությունները հեղափոխությունից հետո ազգայնացրված են. այսինքն պատկանում են ժողովրդին և վոչ թե մասնավոր անձերի—բուրժուաների և կառավարվում են պետական վարչությամբ: Սրա հետ միասին ընկավ աշխատանքի նախկին շահագործումը կապիտալի կողմից: Սրանից ել գործարանների և ձեռնարկությունների բանվորները մեր լերկրում դադարեցին վարձավորներ լինել, ինչպես եյին մինչև հեղափոխությունը:

Այն ժամանակ գործարանատերը իր քմահաճույքով վարձում էր, վարձատրում, պարգևատրում և արձակում բանվորներին: Վերջիններ-

ըրս բացի աշխատավարձից վոչնչով կապ-
ված չեյին գործարանի կամ ձեռնարկության
արտադրության և բաղդի հետ: Այժմ՝ բանվոր-
ները չեն աշխատում գործարանատիրոջ համար,
այլ մասնակցում են ընդհանուր գործին արտա-
դրության: Գործարանի հաջողությունը իրենց
սեփական հաջողությունն է, գործարանի ընդ-
լայնումը նրանց հալարտությունը, նրա-անհաջո-
ղությունները նրանց սեփական դժբախտությու-
նը: Մյուս կողմից նրանք գործարանի վարչու-
թյան համար սոսկ աշխատավոր ձեռներ չեն,
այլ թանկագին աշխատակիցներ, վորոնցից կալ-
ված է արդյունաբերության հառաջագիմու-
թյունը և ձեռնարկության հիմնավորումն ու
ծաղկումը: Այս նոր հարաբերության վրա յե
հիմնված մեր հոլյսերը՝ տեսնելու արդյունաբե-
րության վերածնունդն ու զարգացումը: Բան-
վորների դրությունը գործարաններում և ձեռ-
նարկություններում առաջվանից միանգամայն
փոխվեց. նրանց վերաբերմունքը դեպի ձեռնար-
կությունը բոլորովին նոր է, չտեսնված վոչ անց-
յալում և վոչ ել մյուս պետությունների մեջ,
բացի մերից:

Ճիշտ է, փոքր գործարանները և ձեռնարկու-
թյուններն այժմս ել գտնվում են մասնավոր
մարդկանց — կապիտալիստների ձեռքերում, այս-

տեղ տերերը իրենք կազմակերպում են արտա-
դրութիւնը և վարձում բանվորներ: Սակայն այս
մասնավոր ձեռնարկութիւնների մեջ յետ նախ
կին տերերի քմահաճույքներին սահման ե դըր-
ված: Պրոֆիտութիւնները վորոշում են աշխա-
տանքի վարձատրութեան կոպարները և սրանք
պարտադիր են գործարանատերերի համար, պե-
տական տեսուչները հետևում են, վոր տերերը
կատարեն աշխատանքի մասին յեղած որոշու-
թիւնները, ժողովրդական դատարանը պաշտպանում ե
աշխատավորների շահերը, այստեղ արդեն այլ-
ևս տեղի չեն ունենում նախկին շահագործու-
թիւնները:

2. Աշխատավորների դրութիւնը չափազանց
փոխվեց նաեւ գյուղում: Սակավ հող ունեցող
գյուղացիները դադարեցին իրենց հարևան կալ-
վածատերերի հարատեւ պարտապանները կամ
նրանց հոտադր լինելուց: Խ. Ս. Հ. Մ. մեջ հողից
կարող ե ոգտվել միայն նրա վրա աշխատողը,
այսինքն նա, վոր մշակում ե: Վարձվորի աշխա-
տանքին կարելի չե դիմել միմիայն ծայրահեղ
դեպքում, յերբ, որինակ. ընտանիքի մեջ պա-
կասում են բանվորական ձեռքեր: Կալվածական
հողերը խլված են սեփականատերերից և նրանց
մեծ մասը հանձնված ե աշխատավոր գյուղացի-
ութեան՝ ոգտվելու: Յեւ գյուղացիների հողի այս

հավելումն արդեն պետք է բարելավել և մեծացնել նրանց տնտեսութիւնը:

Սրա հետ միասին գյուղացիներին հնարավորութիւն է տրվում բարձրացնելու իրենց տնտեսութեան փորակը, իրենց աշխատանքի արտադրութիւնը:

Դուք կարդացիք, թե ինչպես Պակովի նահանգի Բրիգինոյան կոմունան (յերես 25.) սկսեց գործել նախկին կալվածատիրոջ կալվածքում: Այս կոմունայի ամեն մի անդամը միայնակ չէր աշխատում, այլ մյուսների հետ միասին՝ ընդհանուր ծրագրով: Ինչ անհասանելի էր առանձին գյուղացուն, հասանելի դարձավ միաբան կոմունային: Նրա յեռանդուն գործունեութիւնը կառավարութեան կողմից արգելի չէր հանդիպում. ընդհակառակը, կառավարութիւնը խրախուսում էր գյուղացիների այդ տեսակ կոլլեկտիվ տնտեսութեանը և այսպիսի փորձերը պետք է վոր բազմանան:

Պետական իշխանութիւնը տնտեսութեան բարգաւաճման գործում ձգտում է նպաստել վոչ միայն կոմունարներին. այլ և գյուղական համայնքներին, ընկերութիւններին և նույնիսկ առանձին յերկրագործներին:

Ինչ առաջ մատչելի յեր ունևոր կալվածատերերին, այժմս սկսում է պատվաստել գյուղացի-

ության մեջ. գյուղատնտեսական կատարելագործ-
ված գործիքների գործածութիւնը, խոտացա-
նութիւնն ու բազմադաշտյան վար ու ցանքար,
արջրտի տեղերի վոռոգումը, ճահիճների չորա-
ցումը, անասունների տեսակի անվաճումը, հում
նյութերի մշակումը, ելեքտրական շարժիչների
գործածութիւնը, վլասակար բույսերի վոչնչա-
ցումը, Բոլոր այսպիսի միջոցները պահանջում
են դրամական ծախսեր և ամբողջ գյուղի կամ
գյուղացիական խմբերի միահամուռ գործակցու-
թիւն: Պետութիւնը պարտավոր է իր միջոցների
համեմատ ողնութիւն հասցնել գյուղացիներին
այսպիսի ձեռնարկութիւնների միջոցին: Նա
դարձեցնում է գյուղացիների ինքնագործունեու-
թիւնը և խրախուսում՝ փոխառվութեամբ, մաս-
նագետների խորհուրդներով, պահեստներով, դա-
ռախոսութիւններով, դասընթացներով և այլն:

Գյուղացիական ամենաաղքատ տնտեսութիւն-
ներին արտոնութիւններ են տրվում հարկերը
վճարելու և այս — այն նպատակով, վոր նրանք
չդիմեն հարուստ մարդկանց ունեւթյան և կախ-
ման դրութեան մեջ չընկնեն:

Պետութիւնը վերացնելով անհատական խոշոր
հողատիրութիւնը, վոչնչացրեց գյուղացիների
ճորտական կախումը կալվածատերերից և թույլ
չի տալիս նույնպիսի ճորտական կախում աղքատ

գլուղացիների հարուստներից: Այսպիսով բան-
վորի և գլուղացի-յերկրագործի աշխատանքը կազ-
մում է պետութայն գլխավոր հոգսը: Այդ աշ-
խատանքը պաշտպանվում է ամեն տեսակի զըր-
կանքներից և հովանավորվում պետական հիմ-
նարկությունների կողմից:

3. Մինչև 1917 թ. հեղափոխությունը ցարա-
կան կառավարությունը արհամարհում էր բան-
վորների և գլուղացիների կարիքները: Նա շատ
անգամ իմնատ աշխատավորների պաշտպանում
էր ունևոր ժարդկանց շահերը, զորավիգ հանդի-
սանալով ազնվական հողատերերի և կապիտա-
լիստ ձեռնարկողների իրավունքների և արտոնու-
թյունների:

Այն ժամանակ պետական բոլոր հիմնարկու-
թյուններն այնպես էին կազմակերպված, վոր
իշխանությունը կենտրոնացած էր ունևոր դասա-
կարգի ձեռքում: Աշխատավորների բաժինը աշ-
խատելն ու հպատակվելն էր: Սակավաթիվ ազ-
նվականությունն ու բուրժուազիան չինովնիկա-
կան որգաններին միլիցիական կանոնների շնորհիվ
տիրապետում էին բազմաթիվ գլուղացիութայն
և պրոլետարիատին:

Այժմյան պետական կազմակերպությունը
Խ. Ս. Հ. Մ. ն մեջ այլ է:

Միապետի կամ ցարի իշխանությունը տապալ-

ված է, բուրժուազիայի ուժը արմատից կտրված՝ խլելով սեփականատերերից հողը, գործարանը, ձեռնարկութունները, բանկերը:

Միութւան մեջ ամբողջ իշխանությունը պատկանում է աշխատավոր ժողովրդին՝ իդեմս աշխատավորների ներկայացուցիչների խորհրդին:

Ովքեր չեն աշխատում, ով ապրում է վոչ իր աշխատանքի յեկամուտով, իրավունք չունի մասնակցելու խորհուրդներին, չի կարող «տանձնել վորևէ պետական, նույնիսկ ամենահասարակ պաշտոն: Ովքեր ոգտվում են վարձու աշխատանքով իրենց արհեստանոցներում կամ գործարաններում, ովքեր ապրում են առևտրով, իրենց ընտանիքի հետ չի ընտրում և չի ընտրվում խորհրդի անդամ:

Աշխատանքը բոլոր քաղաքացիների պարտականությունն է համարվում և այս պատճառով չաշխատողները զրկված են վոչ միայն կառավարելու իրավունքից, այլ և զենք կրելու, բնակարանային ընկերություններին մասնակցելու, պրոֆեսիոնալ դպրոցներում ուսուցչութուն տնելու իրավունքներից և այլն:

Բուրժուազիայի այս իրավազրկությունը խ. Ս. Հ. Մ-ն մեջ արտահայտվում է հետևյալ լուրջագով. (չաշխատողը չի ուտում):

Ընդհակառակը, բոլոր աշխատավորները, նախ

և առաջ լերկու սեռի պրոլիտարիատը, 18 տարեկանից սկսած՝ միանգամայն անկախ նրանց ազգությունից և բնակավայրից, ոժտված ե քաղաքական գործունեյության իրավունքով. նրանք կարող են մասնակցել գործարանների և ձեռնարկությունների խորհրդի մեջ, գյուղական և քաղաքային խորհուրդներում, կարող են ընտրել և ընտրվել ամեն տեսակ խորհուրդների անդամ: Նրանք կարող են անդամ ընտրվել գործադիր կոմիտեների և ստանձնել զանազան պաշտոններ: Յեւ, հիւրավի, այժմ շատ պաշտոններ, թե տեղերում և թե կենտրոնում, տրված են մուրճի և աւորի մարդկանց—այսինքն այնպիսիներին, վորոնք յեղել են և այժմ ել են տոմսական բանվոր, կամ տոմսական հողագործ:

Միայն բանվորներն ու գյուղացիները կամ բանվորա-գյուղացիական շահերին փորձված կողմնակիցները կարող են պաշտոնյաներ լինել կամ վորպես ձեռնարկությունների բարձր վարիչներ, կամ վորպես պետական կարգադրությունների կրտսեր գործադիրներ: Այս պատճառով ել մեզ մոտ կառավարությունը կոչվում ե բանվորա-գյուղացիական, տարբերվելով նախկին ցարական կառավարությունից, վոր ազնվապետական եր, բուրժուական: Նա տարբերվում ե նաև Անգլիայի, Ֆրանսիայի և այլ իմպերիալիստական կառավարություններից:

Բուրժուական նախկին տիրապետությունը, վոր կանգնած էր արդյունաբերական ձեռնարկությունների, առևտրի ու բանկերի գլխին, տա պալվել է. նրա տեղը կանգնել է բանվորական դասակարգի իշխանությունը, վորին առաջնորդում է կոմունիստական կուսակցությունը:

Ապագայում յիշլրի աժբողջ բնակչությունը չպետք է բաժանվի դասակարգերի, բայց քանի դեռ գոյություն ունի բուրժուական դասակարգ և նրան կողմնակիցներ կան արտասահմանում, կապիտալիստական յերկրներում, մինչ արդ բանվորական դասակարգը պետք է իր ձեռքի մեջ պահի դիկտատուրական իշխանությունը, իրեն վերապահի լիակատար տիրապետությունը և պրոլետարական իրավունքների պաշտպանությունը:

Իսկոր պետական հիմնարկություններ, համագումարների և ժողովների մեջ, ամենաստորից սկսած մինչև ամենաբարձր կենտրոնականը, նախագահում են և տնօրինում աշխատավորները — բանվորներն ու գյուղացիները, առանց բուրժուազիայի վորևե միջամտության: Ահա սրանում է մեր խորհրդային պետության գլխավոր առանձնահատկությունը:

4. Նրա յերկրորդ եյական տարբերությունը հանդիսանում է ազգությունների իրավունքների

հավասարությունը: Նախկին ցարական Ռուսաստանում, նրա բազմազան և բազմալեզու բնակչությամբ կառավարությունը արհամարում երազային լեզուները, բազմաթիվ ժողովուրդների՝ Ուկրաինացիների, թաթարների, հրեաների, հայերի և մյուսների առանձնահատկություններն ու սովորությունները: Այդ կառավարությունը ցանկանում եր վերափոխել ընդարձակ պետության բոլոր բնակիչներին Վելիկոռուս տիպի կամ ինչպես այն Ժամանակ ասում էին՝ ալազգիներին ուսացնել:

Ծարական կառավարությունը ցանկանալով միայն ինքը կառավարել, ամեն կերպ խանգարում եր ազգությունների մտավոր և հասարակական զարգացման, նա հալածում եր նրանց ինքնուրույնության ձգտումը, դուրս եր ձգել նրանց մայրենի լեզուն դպրոցներից, դատարաններից և հիմնարկություններից: Այնտեղ՝ ուր յերկու լեռեք ազգություններ էին ապրում միասին, (ինչպես, որինակ՝ Կովկասում) այնտեղ կառավարությունը նրանց գոգոում եր միմյանց դեմ և նույնիսկ թշնամացնում, վորպեսզի ալ միջոցով թուլացնի նրանց ուժերը, վորպեսզի առանց դիմադրության կարողանա հրամայել:

Ծարական Ռուսաստանը մի ահագին կենտրոնացած կառավարություն եր, այսինքն այնպի-

սի մի պետութիւն, վոր կառավարվում եր այն
ժամանակվա մայրաքաղաք Պետերբուրգի պաշ-
տոնյաների հրամաններով, տասնյակ վոչ վելի-
կոռուս ժողովրդների բաձարձակ ճնշումով։ Յու-
րաքանչիւր ազգութիւն ինքն ըստինքյան փոք-
րամասնութիւն եր կազմում ահագին յերկրի
մեջ և այս պատճառով ել կառավարութիւնը
կարողանում եր բացարձակ գերակշռող հանդի-
սանալ։

Այժմ նույնը չէ. հեղափոխութիւնից հետո
ամեն մի ազգութիւն, վոր ապրում ե նախկին
Ռուսաստանի սահմաններում, ստացել ե ինք-
նորոշման իրավունք, նա կարող ե կամ առան-
ձին, բոլորովին անկախ պետութիւն կազմել,
կամ լինել խորհրդային ընդհանուր պետութեան
մի ինքնավար մաս։

Մեր խորհրդային պետութիւնը մի շարք խոր-
հրդային հանրապետութիւնների միութիւն ե։

Այժմ այս միութիւնը պարունակում ե յուր
մեջ չորս մեծ հանրապետութիւններ.


- 1) Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. կամ ռուսական սոցիա-
լիստական ֆեդերատիվ խորհրդային հանրապե-
տութիւն. 2) Ու. Ս. Ս. Հ. կամ. Ուկրայնայի
սոցիալիստական խորհրդային հանրապետութիւն.
3) Բ. Ս. Ս. Հ. կամ. Բելոռուսիայի սոցիալիստա-
կան խորհրդային հանրապետութիւն. 4) Ա. Ս.

Խ. Ֆ. Հ. կամ Անդրկովկասի սոցիալիստական
խորհրդային ֆեդերատիվ հանրապետութիւն:
Այս չորս հանրապետութիւններից — առաջինը
ռուսականը ամենամեծը, ներկայացնում է Վե-
րկոռուսների և մի քանի ինքնավար պետու-
թիւնների՝ Թաթարների, բաշկիրների, Թուրքես-
տանի, Կարելների, յակուտների, բուրյատների,
Լեռնականների, Դաղստանի, Ղրիմի և Վոլգայի
գերմանացիների միութիւն: Այս պատճառով ել
ռուսական հանրապետութիւնը կոչվում է ֆե-
դերատիվ. այսինքն միացած:

Ճիշտ այդպես ել Ա. Խ. Ս. Ֆ. Հ. հանդիսա-
նում է Անդրկովկասյան հանրապետութիւննե-
րի՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միու-
թիւն: Այսպիսով Խ. Ս. Հ. Մ. շատ հանրապե-
տութիւնների միացնում է մի ամբողջական
պետական կազմակերպութեան մեջ: Այս միու-
թեան մեջ վոչ մի ազգութիւն չպետք է ճնշի
մյուսին, բոլորը միացել են խորհրդային կազ-
մակերպութեան մեջ, մերժելով բուրժուա-կապի-
տալիստական կազմակերպութիւնը: Սակայն
նախկին ռուսական կայսրութեան վոչ բոլոր
ազգութիւնները ցանկացան մտնել այս սոցիա-
լիստական միութեան մեջ. Լեհաստանը, Ֆին-
լանդիան, Նաստոնիան, Լիտվան և Լատվիան կազ-
մեցին առանձին պետութիւններ և պահպանե-

ցին բուրժուական քաղաքական կադմակերպու-
թյունը:

Սակայն նախկին Ռուսաստանի առանց այս
անջատված մասերի եւ Ս. Խ. Հ. Մ. հանդիսա-
նում եւ մի ահագին յերկիր 130 միլիոն բնակիչ-
ներով. մի յերկիր, չոր դարերի ընթացքում
կադմակերպվել եւ աշխատավոր բանվորության
արդյունքով եւ այժմ հալտարարում եւ աշխատանքը
նոր կյանքի հիմունք:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


	Եջ
1. Բոլորը սերտ կապված են	3
2. Ստիպողական և ազատ աշխատանք	10
3. Հողն ու մարդիկ խ. Ս. Հ. Մ. - ի մեջ	22
4. Բրիդինոյան կոմսոնա	25
5. Աշխատանքի պահպանությունը	30
6. Սոցիալիստական ապահովություն	39
7. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու- թյունների Միության քաղաքական կազմը	49



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FI 0001593



A $\frac{11}{24540}$



ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

[054.]